

Հայրենիքի խմբագրութիւնն այն պարագային միայն գուցէ իրաւունք պիտի ունենար այսպիսի որոշութիւնն մը զալու, երբ ըննէր ու տեսնէր որ քրանսերէնի մէջ ալ soi-même-ի հայցականը կը գործածուի իրը արմատ կամ պարզ բառ, ու իրը այսպիսի կը հոլովի և խնդիր կ'ըլլայ ամէն տեսակ բայերու. մինչդեռ մեր գիտածն այն է, որ գրյութիւն չունի այսպիսի ինչ քրանսերէնի մէջ, ու soi-même կը գործածուի նախաղրութիւններով միայն, առանց յօդի, օրինակի համար. de soi-même, à soi-même, en soi-même, և այլն: Եւ այս նախաղրութիւնները կ'առնէ ըստ պահանջման տեսակի իրեն հետեւող բային. ուստի կ'ըստուի, On doit parler rarement de soi-même—Penser à soi-même — Il faut conduire ses affaires soi-même, և այլն:

Այս, ո՞ւր է այս օրինակներուն մէջ soi-même-ի հայցականն իրը արմատ կամ պարզ բառ հոլովուած, ինչպէս հայերէնի մէջ կ'ըննեն այլանդակօրէն վերոյիշեալ գրողներն ինըրիշը հայցականը, և չարաշը կը տանձնն այն, թոյլ տայով որ ամէն տեսակ յարմար և անյարմար բայ զայ զարնէ անոր զիլուն:

Չ'արծեր կարծեն աւելի երկարել քմահաճոյութ ըսեմ, թէ տգիտութեամբ, կամ յուի սովորութեամբ գործածութ այսպիսի տարրական և աններէի սիսամի մը վրայ. միայն պիտի յորդորեմ բոլոր հայ լեզուն սիրովները, որ վերոյիշեալ օրինակները չգրեն սիսալ՝ այլ ուղիղ:

Հ. ԵՊՐԵՄ Վ. ԱՊՐՈՅԵԱՆ

Ծ. Ծ.

## ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

### ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐՈՒ ՎՐԱՅ

(ԺԶ. ԺԷ. ԺԸ և ԺԹ Դ-ր Կ- և Պ-լ-)

(Եար. տես Բազմ. 1929, էլ 229)

Տ.

(ԺԹ Դ-ր 1800-1865)

#### ԴԱՄԲՐԱՐԱԾ

Մեծանուն բոսանի Զարագեանց Գասպար Ամիրայի և ո. դոց Պաղոտասար Ամիրայի Բազմաշատ Միկրէկլլոյ Սր. Երրորդուն  
[թիւն]

Եկկաց. բանագույն Գասպար Աղայի որ կատարեցաւ բաս և ինը ամաց հեգուցիւ. Ընդ գիրի չոփիսիմ ցանկայի մօրն Ծովանոյն ժամանելոյ ի Գրիսոսու.

Դաւար բարունակ՝ ծաղիկ Մերաբաց, նվ չինաղագեղ՝ զաւակ զրկանաց.

Զիմրող թառամել՝ ի ժանս խորշակաց, փոյթ ի փոյթ հասկը՝ յայս ծիր շրջանաց, Դու կենդանավայլ՝ վարդ հոտոտանաց.

Մանն Զէրեգնան՝ յիշառակ կենաց: Լինել ունէիր՝ պասկ պարծանաց,

արդ եկի այժմում՝ թախիծ թախանաց: Պաշասար հայր քո՞ կարի անձկայրեաց,

ի կոծ զառնութեան՝ և յալի լալեաց. Պար առեալ զիւ համակ սևազեաց:

Երգէր Դաւթայ յոզը հառաշանաց: Ո՞ւր ես Գասպարիկ որդեակ քաջազանց.

որդեակ իմ Գասպար լոյս իմոց աշաց: յամի Տեառն 1852 մայիս 1.

Է

#### Ցապան

Մեծահաւատ Պաղոտասար Ամիրայի Զէրացեան որ հանգեաւ վաթսուն և եօթը ամաց:

53. Զէ թորգոմնան տան վհեազունք յայս կա-  
[տար],

աղէկիզեալ մատն շար(ժ)են յողբոց լար: Մի՞թէ վսեմ և բարերար իշխանի,  
հողախչուի ի դամբան:

Այս երկրորդ Բէսէլիէլ մեզ ցուցաւ, ճարտարապետ Երրորդութեան տաճարիս. Հանդիսացաւ պատճառ նախկին յառատ տուրու  
ի յաղթանակ շինութեան:

Քարիք պէս պէս մի զմբով ել և էջ.  
յանձն նորա և հանապաց խայտալին:  
Զուարթագէմ փայէէն գէմք իւր ի վա(ս)-  
ի սէր սրբոյ տաճարիս:

Աստուածային սիրոյն ցնալ և զամբար,  
փայէէր յոզիս անջնչելի վառ ի վառ:  
Նոյն մաքրութեամբ զիւրն հոզի աւանդեաց:  
հասեալ վերին օթևան:

Որ տէրդ ես երկնից՝ երկրի տաճարաց.  
շող կաթեսցն լուսոյ անման տէրութեանդ.  
ի յերկնանեն ընկանալ սորից առաջաստ.  
որում անյա կայր ոգին:

յամի՛ Տեսան 1854  
օգոստոսի 19

### Է

#### 54. Դամբարան

Չմիւսնացի բարեհամբար Ալյավանեան Դամբարան  
աղայի պարկելուտառ աւեւսին Սրբունի  
Տիկնոյ

Որ ի գամբանդ հանզի տոհմիկ մանկամարդ,  
Պարկելութին փայլէր յանձնին անարատ.  
Անձկան զօրերն անցուցանէր անբարբառ,  
Քան զայծեմնիկն յարդինս բարեաց ոչ նուազ,  
Մանագուշակ երկունս անփալ կատաղի,  
Տարաժաման է ողդ սեան նուաճի:

Փոխեալ ի հասափ 45 ամաց  
Տեսան  
յամի՛

1854 մարտ 20

55. Կեանք մեր անցանի՝ որպէս հովանի,  
Բայց անոն բարի՝ Թայ կնեղանի:  
Տապանն է տեղի՝ այն Զարբիսանացի,  
Բողաշանեան որդի՝ Յակոր աղայի:  
Ցայս մահարձանի՝ կան հայր և որդի,  
Կենք և մահուլ՝ անքած սիրելի:  
Ցիսուն և հինգ էր՝ իւր հասակ ամի,  
Փոխեցս երկրէս՝ առ Տեսան ամնի:  
Առ քեզ պաղատի Փրկչի Ցիսուսի  
Հանզի ի յերինի ի լոյց նորակի:  
յամի՛ տեսան 1855 հոկտեմբեր 15

#### 56. Մահարձան

Կարապետ Ռւողունեան թալասի,  
Լի յուսով յարութեան ասս հանչչի:  
Այր պարկեշտ հաւատովք զօրաւոր,  
Որ զանձուց փոխանակ երկրաւոր,  
Ըստացս յԱլսուծոյ զանձ անզին:  
ԶԵՍԱՑԻ Սըրբազան բարունին,

Զոր ազգին ընտրութին նորակարգ,  
ԵՄ ՍՐՈՒԹ ֆաւարին պատրիարք:  
Եւ որ զայս մահարձան սըզագեաց,  
Ցիշատակ ծընողին իւր կանգնեաց:  
յամի՛ 1855 — 16 ապրիլ

Ըստիփան Ռւողունեան թալասի,  
Բարուց առըն բարի էր և որդի:  
ՈՐ Եէպսի ի յանձնին իւր պահեստ,  
Ըստացեալ էր խոնարին իմս արուեստ,  
ԱՅԼ ընտիր միշտ ի գործ լաւութեանց,  
Սիրբցաւ ի տեսունէն բարութեանց:  
Եւ գեր եւս տիգ զօրաւոր  
Փոխեցաւ ի հանգիստն երկնաւոր.  
Եւ ասոէն ընդ վիմաւ ընդ իւր հօր.  
Հանզի՛ քաղցր յարութեանն մինչ ի յօր:  
յամի՛ Տեսան 1855 յունս. 10 և շինէց.  
տպիս. 1865

#### Դամբարան

Աժամակը. սրբ. Եսայի աղայի Պէկեսնց  
Ո՛գու մարդանանձ Պարկեանց սուր մկրատ  
ընէր ի սպա.  
Վէճ առաքինոյս պատուական կենաց կորե-  
ցէր զար:  
Այս մեծահաւառ և բարզաւաճեալ ի ձիրս  
հոգւոյն  
Կրօնասիրութեան, յազգասիրութեան ի  
փառ փայլուն:  
Պանծալի էր իսկ և առ ի հոգալ զադքատն  
և զարին,  
Զթողեալ պակաս ի սրբութեանց ինչ ամ-  
բարբառ մասին:

Նա զպատուական զիաշին սրբոյ շքել գրո-  
շակ,  
Ի սիրտ և ի լանջ կրօնիւք բարձեալ ի գէմն  
համարձակ.  
Հառաշանք և ճիչ, ճիչ, սրտակոտոր բառ-  
նան խումբք որբոց,  
Արդ գիրախարհիկ հեծեն յարտասուս ի  
սուզ և ի կոծ:  
Բուժեա վեհ մուսայդ դառնութեան սրտիցս  
կարենք զիսց,  
Զի որպէս ասուա փայլեալ ժամք հապճե-  
պակաց վեհիւ աւուրց:  
Մի՛ լայք զիս ասոէն, Թորգոմեան Ազգին  
ընտիր գեհազունք.  
Զի շեմ ես մինեալ այլ կամ կենդանի յոր-  
դիս իմ առոյց:  
Ո՞հ լիցին փառք նորա և պարծանք Ազգիս  
իմ սիրուն.

Ո՞՛ պահեսցն փառու իմ անուան յաւետենան  
կանգուն։  
Արդ միայն հոգիս զուարթուն կանխեալ  
առ լոյս իմ և Տէր,  
Որ նման աստէն իմ կմախք Թան չիբախս  
անհամբեր։  
Խնդրեմ զիս յաշեայցդ ի սուրբ զումարէն  
միք մերժեր զիս Տէր,  
Լսելի արա եկամք օրհնութեան ԱՍՏՈՒԱԾ  
մարդասէր։  
Փոխեալ ի հասակի 60 ամաց  
1855 սեպ. 15

58. Ես մայր Տաքէսեան  
զութսուն և մէկ գարուն  
կեցի անդորր և երջակաւէտ։  
արդ Թամբ մնձաւ անձկանք,  
զի և առ իս ասանց Տէր  
— Տալիթա կուսի —  
1857

Է

59. Ամաց մեսասանից  
թագուհի օրիորդ զնաղ

Տաքէսեան տոնմին ի սուգ,  
Ընդ սրբատաշ մարմարինաւս  
Ննջէ գքուն յաւերժական։  
1859

Է

Է

60. Անգութ մանգապին Այս է տապան հանգս-  
Միրոյ ողջակէզ, տեսն  
Զառուն Աճէման Մանեայ տիկնոջ դուսոր  
Թուքը առեկէզ։ Համալպաշան Պետ-  
Անոն իմ Մատա- րոսի  
թիւա Եւ կողակից Աճեմեան  
Խույումնի արուեստ մահ։  
Հանէ ողորմիս, հոգ Ռսէրի Մատաթի  
ւոյս ողջակէզ։  
Փոխեալ 1827 Սա զամս ետէս  
մայիս 25 Ընդ եօթանասուն։  
Սընեալ ծէրութեամբ  
Լիք բազմարէզնան։  
Մինչ յանմահութեան

Փոխիւր անդ ի ծոց։  
Մայր ինքըն գոլով  
Չորեցունց որդոց։  
Զառարինութեանցն  
իւր թիւ արգաւանդ,  
(Ք)ան զշարս տանց։  
Թողոյր ի յաւանդ։  
յամի առ 1867 ։  
փետրվար 24

Հոս կը վերջացնենք տապանագիրներու  
մասին մեր կատարած ուսումնասիրութեան  
այս առաջնին փորձը։ Ուրիշ առիթով մը  
պիտի ինօսինք տապանագարերու զարդա-  
րանդակներուն վրայ։ Ինչպէս աւելի վերը  
յայտնեցինք՝ թերա-թանկալթիի զերեզ-  
մանատունը մեզ իրը աղրիւր ընտրեցինք,  
որովհետեւ ան բաղդատելով կը Պոլոյ ու-  
րիշ հայ գերեզմանատուներուն հետ, ոյնի  
իսկ այսօրուան վիճակին մէջ անհամամատ  
աւելի հետաքրքրական է թէ զրական և  
թէ արուեստագիտական կրկին տեսակէտ-  
ներով։

Պատճառն ալ սա է որ՝ թերայի հայերը  
եւրոպացիներու հետ մշտառեւ յարաբերու-  
թեան մէջ զանուելով, կը Պոլոյ ուրիշ  
թաղամասերու մէջ բնակութիւն հաստա-  
տած հայերէն շատ աւելի զարգացած էին։

Գերեզմանատուներու ուսումնասիրու-  
թիւնները անսպառ նկրի կրնան մատակա-  
րարել հայ կեանցին վրայ։ Գրագէտը,  
բանասէրը, արուեստագէտը, բժիշկը և  
այլն ամէնքն ալ իրենց կարգին մեծ չափով  
կրնան օգտուիլ մեր ապահովուն մեզ աւանդ  
ձգած տապանագիրը ուսումնասիրելով։ Մեր  
յօդուածաշարբին մէջ չզետեղեցինք «Նա-  
հատակներու» և օսար լեզուներով (թուր-  
քիւն, վրացիւն) գրուած տապանագիր-  
ները, որոնց առանձին պէտք է ուսում-  
նասիրուին։

Գ. ՀԱԱՍԵՐ

•••••

1. 1865 պիտի ըլլայ, որովհետ 1865ին անդին կա-  
ռագութեան հրամանով թանկալթի զերեզմանատան  
մէջ ննջեցեալներու թագումը արգիլուեցաւ պաշտօնագիս։